

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՀԱՄԻԼԹԸՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ
ԱՌԹԻՎ

ԳԱՆԱՏԱՅԻ ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՎԱԶԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՔԵՇԻՇԵԱՆԻՆ, ՀԱՄԻԼԹԸՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ
ՀԱՌԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Համիլթըն, Գանատա

Բարեխնամողն Աստուած Իր լոյս հովանիին ներքև միշտ շէն ու պայծառ կը պահպանէ քրիստոսականոյց առաքելական Մայր Եկեղեցին դարեր շարունակ, որ նաև մեր օրերուն իր կենարար առաքելութիւնը կը շարունակէ ի Մայր Հայաստան և հայ սփիւռքի ամբողջ տարածքի վրայ, ի շինութիւն համայն մեր ազգի վաւակներուն հոգևոր ու ազգային կեանքին:

Այսօր անհուն է Մեր ուրախութիւնը որ Ձեր բոլորանուէր ջանքերով և մեծահոգի բարեպաշտ հայորդիներու բարոյական ու նիւթական առատաձեռն նուիրատուութեամբ, Գանատական հիւրընկալ քրիստոսասէր հոգի վրայ, կը բարձրանայ խաչապարդ գմբեթը համայնքիդ, և Ձեր եկեղեցին իր դռները կը բանայ Ձեր աղօթքներով, իր սուրբ խորանէն միշտ բաշխելու համար Ձեզի բոլորիդ և Ձեր վաւակներուն, հոգւոյ մխիթարութիւն և շնորհներ երկնառաք:

Համայնքիդ այս յաջողութիւնը կը հանդիսանայ ճշմարիտ յաղթանակ մը Գանատայի հիւրընկալ ու մարդասէր ժողովուրդի ծոցին մէջ: Յաղթանակ մը, որ ճշմարիտ աւետիս մըն է նաև համայն մեր Եկեղեցիին և յատկապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար:

Թող Տերը յաւետ անասան և լուսառատ պահպանէ Ձեր նորակառոյց եկեղեցին և անոր սուրբ կամարներէն Ձեր աղօթքները թող ուղիղ երկինք բարձրանան որպէս խունկ անուշաբոյր:

Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնէն և Մեր սրտէն Ձեզի բոլորիդ Մեր սէրը, Մեր գնահատանքը, Մեր քաջալերանքը և Մեր օրհնութիւնը:

«Գոհացարուք յամենայն ժամ ի վերայ ամենայնի, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և հնազանդ լերուք միմեանց երկիւղին Քրիստոսի»։ Եւ «Այսուհետև պօրացարուք Տերամբ և կարողութեամբ պօրութեան նորա»։ (Եփես. Ե. 20—22, 2. 10) ամէն:

Վազգէ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ